

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԱԶԱՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ

Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

XVIII դարի Սյունյաց նշանավոր բանաստեղծ Պետրոս Ղափանցու մասին խիստ սակավ տեղեկություններ են մեզ հասել: Հայտնի է, որ Պ. Ղափանցին 1753—1756 թթ. եղել է էմիաթնի միարան, և Աղեքսանդր II կաթողիկոսի կողմից նվիրակության պաշտոնով ուղարկվել է Ղրիմ, ապա Պոլիս: 1772 թ. Պ. Ղափանցին աշխատել է Ադրիանապոլսում՝ որպես վերատեսուչ, իսկ կյանքի վերջին տարիներն անցկացրել Նիկոմեդիայում: Վախճանվել է 1784 թ. խորին ծերության մեջ:

Պ. Ղափանցին զրադվել է նաև ուսուցչությամբ, սակայն նա իր ժամանակին լայն ճանաչում է գտել որպես տաղանդավոր բանաստեղծ և երգահան. «...Այր զրադէտ, բազմահմուտ, երգահան և բանաստեղծ բնածիր»¹:

Պ. Ղափանցու անձնական կյանքի մասին որոշ պատկերացում են տալիս նրա երգերը: Գրքանք համակված են խոր թախիծով ու տխրությամբ, յզացվում է, որ բանաստեղծը ապրել է հասարակական մեծ վիշտ, և որ այդ վիշտը ուղեկցել է նրան իր ողջ կյանքում՝

Դողուղի կալեալ քալեմ,
Կագիկաղ՝ կամաց-կամաց.
Տրտմութեան կառք և սայլ ևմ.
Հին ցաւով՝ ամաց-ամաց:

Ո՛չ գիտեմ, առ ո՞վ երբայց.
Իս առ ո՞վ բողոք կալայց.
Այս ցաւովս շրջեցայց.
Ռախարն զիս՝ ամաց-ամաց²:

Հստ երևույթին Պ. Ղափանցին իր երգերի լավագույն մասը յտեղծել է կյանքի վերջին շրջանում՝ ծերության օրերին, օտարության մեջ: Թվում է թե երգչի հոգում կուտակված զգացմունքները անհանգստացնում են նրան և պոռթկում. զգացվում է, որ բանաստեղծը երկար, շատ երկար ճանապարհ անցնելուց հետո, սպառված համբրությամբ իր վերջին խոսքն է ասում ընթերցողին.

Էի, ևմ և եղեց վաւաւան սրգոց,
Հրմուտ հեղինակ հառաչմանց. յոգուց...³.

Ախ ու վախով զօրս անցուցի ներ սրգոյ,
Կեանք իմ լրճաւ, անց և զրնաց գէտ փոյ.
Անկա, ահա, ես ի փառաց և շրճոյ⁴:

Կ. Պոլսում, Ադրիանապոլսում նստած՝ նա մտովին շարունակ իր հայրենիքի հետ է եղել, ցանկացել է վերադառնալ, բայց նրան աչդ չի հաջողվել. ուստի իր խոսքը ուղղելով հայրենիքին, նա գրում է՝

Շաւթիլ, մերձիլ առ ընդ կամիմ՝ ո՛չ կարեմ,
Ուշագնացեալ յուժուլ բափեալ. աննաւ ևմ,
Ցայց ու ցերեկ ի լալոյ ո՛չ դադարեմ...:
Մի մոռանալ զայս քո զերիս լալամիտ...,—

Թախանձում է բանաստեղծը հայրենիքին:

1 Մ. Գ ա ս տ ա պ յ ա ն (Ֆ ա հ Ր ա տ), Հայերը Նիկոմեդիո գլավառին մեջ, Պարտիզակ, 1913, էջ 112—113:

2 Պ. Ղ ա փ ա ն ց ի, Գրքոյկ կոչեցեալ երգարան, Կոստանդնուպոլիս, 1772, էջ 40 (այսուհետև՝ երգարան):

3 Նույն տեղում, էջ 38:

4 Նույն տեղում, էջ 47:

Պ. Ղափանցին պատկանում է մեր անցյալի սակավաթիվ այն բանաստեղծների շարքին, որոնք տեսել են իրենց ստեղծագործությունների տպագրությունը 1772 թ. Կոստանդնուպոլսում լույս ընծայվեց նրա բանաստեղծությունների ժողովածուն՝ «Գրքոյկ կոչեցեալ երգարան»։ Երգասեր հայ ժողովուրդը սիրով ընդունեց ծերունազարդ բանաստեղծի թարմաշունչ տաղերը։ Հենց այդ տարիներին և այնուհետև ընդօրինակությունների միջոցով «Երգարան»-ի բազմաթիվ բանաստեղծություններ մուտք գործեցին ձեռագրերի աշխարհ, գրավոր և բանավոր խոսքի միջոցով մտան հայաբնակ շրջանները։ Հատկապես «Երգարան»-ի եղանակավոր՝ թվով 34 տաղերից շատերը տեղ գտան ժողովրդականացած երգերի շարքում, նոր կազմվող և հրատարակվող երգարաններում, տարեգրքերում և երգվեցին ամենուրեք։ Խրիմյան Հայրիկը հիշում է, որ հայկական ժողովրդական երգերից հետո ինքը շատ է սիրել երգել Պ. Ղափանցու տաղերը։ Այսօր էլ ղևա պահպանվում են երգահան բանաստեղծի տաղերի եղանակներից մի քանիսը։ Ռադիոյով երբեմն-երբեմն լսում ենք «Բացի՛ր, բացի՛ր լիմ կարմիր վարդ անթառամ»—կրկնակով Կոստանդնուպոլսին նվիրված ազատասիրական երգը՝ ժողովրդական արտիստ Շարա Տալյանի կատարմամբ։ Մեզ հասել են նաև «Փութա՝ առ մեղ նաղշուն կաթալ» և «Կանայք ամենայն, քորր իմ սիրական» սկզբնատողերով երգերի հին ձայնագրությունները, որոնք հայտնի են մեր երաժշտականներից ոմանց։

Բանասիրության մեջ, թեև ավելի ուշ և նեղ շրջաններում, սակայն ջերմ ընդունելության է արժանացել Պ. Ղափանցին։ Նրա մասին ամենահին, վերևում հիշատակված տեղեկությունը մենք քաղում ենք Մինաս Գասպյանի «Հայերը Նիկոմեդիո գավառին մեջ» աշխատությունից, ուր նա սեղմ քաղվածքներ է բերում և ուժ. Մավյանի «Պատմություն վանուց Արմաշու» մեզ անհայտ ձեռագիր աշխատությունից։ Մավյանն իր հերթին օգտվել է Պ. Ղափանցուն ծանոթ ժամանակակցի (Արմաշում Պ. Ղափանցու փոխանորդ) Կապուտիկ սրբազանի թղթերից։ Բանաստեղծի անունը բերմ սիրով է հիշատակում հաշատուր Արովյանը՝ «Հափանցին ուներ ղթնգույշ և ղգորովալից սիրտը»⁵,— գրում է նա։ Խ. Արովյանը գրել է նաև մի քանի բանաստեղծություններ Պ. Ղափանցու երգերի եղանակների հիման վրա։ Հետագայում Պ. Ղափանցու մասին գրվում են մի շարք հոդվածներ։ Նրա ժառանգության գնահատման և առանձին բանաստեղծությունների տպագրության ու տարածման գործում կարևոր դեր են կատարել Մ. Միանսարյանը, Ն. Քարամյանը, Հրանտ Ասատուրը, Ա. Չոպանյանը, Թեոդիկը, Լեոն, Հ. Քյուրդյանը և Մ. Մկրյանը։

Պ. Ղափանցու գրական ժառանգությանը ղրադվող բանասերների ճնշող մասը բանաստեղծի երգերի հիմնական հատկանիշը, նյութը, թեման համարել է հոգեշահ սերը և նրան գնահատել որպես սիրո երգիչ, սիրո քնարերգակ⁶։

Պ. Ղափանցին, սակայն, սիրո երգիչ չէ։ Այդ կարծիքը ստեղծվել է նրա այլաբանական բնույթի՝ վարդին և սոխակին նվիրված մի քանի երգերի հիման վրա, որոնք բանաստեղծի կյանքից ու ողջ ժառանգությունից կտրելու և անչափ գնահատելու դեպքում նման թյուր եզրակացություն թերևս ստեղծվեր, սակայն Պ. Ղափանցու գրական ողջ ժառանգության ամբողջական ուսումնասիրությունը բնավ չի կարող այդպիսի տպավորություն առաջ բերել։ Բանասիրությանը հայտնի և անհայտ նրա երգերից և ոչ մեկը սիրո նյութ չունի, հոգեշահ, անծնական սերը, կնոջ սերը չի եղև նրա հույզերի և մտորումների աղբյուրը, այդ առարկան շատ հեռու է նրանից։

Պ. Ղափանցու գրական վաստակը ներկայացնում են կրոնական, բարոյախոսական-խրատական, հայրենիքի և բնության, վարդի և սոխակի քնարական շուրջ 100 երգեր և ավելի քան 60 երկտող ու քառատող բառախաղ հանդավորմամբ բանաստեղծություններ։ Սույն հաղորդումը վերաբերում է Պ. Ղափանցու՝ հայրենիքին և բնությանը նվիրված ազատախոհ երգերին։ Դրանց թվին են պատկանում նաև վարդի և սոխակի այն տաղերը, որոնք բանասերների կողմից սխալմամբ դիտվել են որպես սիրո երգեր։

* * *

Հայտնի է, որ մեր բանաստեղծի ծննդավայրը՝ Սյունիքը, Ղափանը, XVIII դարի 20—30-ական թթ. հայ ազատագրական շարժումների կենտրոնատեղին էր, օրրանը։ Այս շրջանում

⁵ Խ. Արովյան, Երկեր, Երևան, 1958, հատ. 8, էջ 64։

⁶ Տե՛ս, օրինակ, Ն. Քարամյան, Հայ հին երգիչներ, «Արարատ», 1895, էջ 14։ Հ. Ասատուր, Մոռացված բանաստեղծ մը, «Արևելյան մամուլ», 1904, էջ 19։ Լ. Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 1066։

ահա, Դավիթ բեկը դառնալով Իսրայել Օրիի ծրագրած ազատագրական գաղափարների ժառանգորդը, իրականացնում է հայկական նոր զորագնդեր կազմակերպելու գաղափարը Ղափանի հողի վրա և ժողովրդին առաջնորդում է պայքարի:

Թեև կարճատև եղան Սյունիքի, Ղափանի ազատագրության օրերը, թեև նրա ազգային հերոսը՝ Դավիթ բեկը հեռացավ ասպարեզից իր անժամանակ մահով, թեև նրան հաջորդող Մխիթար Սպարապետի եղեռնական մահով դադարեց Ղափանի ազատագրական շարժումը և նրա վերջին զինվորները ցիրուցան եղան, սակայն օտար բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած անհավասար մարտերում կրած փայլուն հաղթանակները մտան պատմության մեջ և նպաստեցին, որպեսզի հայկական անկախ ու ազատ պետականություն վերստեղծելու հարցը այլևս չիջնի օրակարգից: Այդ գաղափարները որդեգրեցին Հովսեփ Էմինը, Մշեցի Հովնանը, Շահամիրյանները, Մովսես Սաֆարյանը: Հայ ժողովրդի ազատագրական տենչանքները օրենսդրական մարմնավորում ստացան Մադրասում հրատարակված «Որոգայթ փառաց», «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» աշխատություններում: Այդ այն ժամանակն էր, երբ սկսվել ու դեռ չէր վերջացել 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ արդեն թուլացել էր սուլթանական Թուրքիայի ազդեցությունը, երբ Ռուսաստանի աջակցությամբ օսմանյան բռնակալության դեմ ելույթներ էին սկսել ստրկացված ժողովուրդները, երբ ժողովրդա-ազատագրական շարժումը արդեն էր տվել նաև Արևմտյան Հայաստանում՝ Մշո դաշտում, Սասունում, Կիլիկիայում, Վանում, Էրզրումում և այլուր:

Ռուս-թուրքական այդ պատերազմի ժամանակամիջոցում էր ահա՝ 1772 թ., երբ Սյունյաց բանաստեղծ Պետրոս Ղափանցին Պոլսում հրատարակեց իր բանաստեղծությունների ժողովածուն՝ «Գրքույկ կոչեցեալ երգարան»: Այդ դիրքը կուսակրոն երգչի քողարկված, անաղմուկ, սակայն բանաստեղծական խոր արձագանքն է աշխուժացող հայ քաղաքական կյանքի: Պ. Ղափանցու գրիչը խթանել են հայրենի երկրի հին և նոր քաղաքական իրադարձությունները, հայրենի աշխարհի անցյալի հերոսական փառավոր էջերը, օտարների լծի տակ նրա կրած տառապանքները, հայ և հույն ժողովուրդների ազատագրական շարժումները:

Ժամանակն արդեն ծնում էր այդօրինակ երգեր, որոնք գաղափարական առումով մի քայլ առաջ էին մղում միջնադարյան հայրենասիրական երգն ընդհանրապես: Այդ տարիներին հրապարակվում է Հակոբ Շահամիրյանի «Երգ, զկնի մաղթանացս յաղագս սթափելոյ երիտասարդացն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղձուցեալ թրմութենէ քնոյ թուլութեան» ծրագրային բանաստեղծությունը: Պատահականություն չէ նաև ուրիշ ցարին, ուսական պետականությունը ներթողող այլ բանաստեղծությունների երևան գալը նույն ժամանակամիջոցում: Սերոբե Պատկանյանը Աղա Մահմադ խանի 1795—1797 թթ. Կովկասում կատարած բարբարոսական արշավանքների դեմ գրում է՝ «Սարսափելի բարկութիւն տեառն մինչ մեզ հասնէր», «Սիրելիք օգնութիւն հասէք», «Սրահար եղէր, շար իշխան» հայրենաշունչ երգերը, որոնցում փառաբանում է նաև ռուսական փրկարար ուժը:

1791 թ. Մադրասում լույս են տեսնում Թադեոս Զուղայեցու (Սագինյանց) «Տետրակ, որ կոչի ողբ Հայաստանեաց—համառօտ ոտանաւոր. առ ի յորդորումն մանկանց հայոց», «Պատասխանի առ մայրն մեր Հայաստան՝ ողբաձայն», «Գովեստ կայսերն Պետրոսի» և այլ երգերը, որոնք իրենց վրա կրում են Շահամիրյանների գաղափարական ազդեցությունը: Նկատվում է, որ դարի առաջագիծ շարժումները, ճնշված ժողովուրդների ազատատենչ ձգտումները որոշ չափով սթափեցնում են նաև կրոնական բանաստեղծներին: Ղազար Ծահկեցու, Հակոբ Վարդապետի, Սիմեոն Երևանցու կրոնական տաղարաններում մուտք էին գործում նաև ազատասիրական հոգևորական բանաստեղծություններ: Այս առումով ուշագրավ է Ղազար Ծահկեցու «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհին» բանաստեղծությունը, ուր երգիչը հայ քաղերին հիշելով սրտառուչ ողորում է ժամանակակից Հայաստանի քաղաքական ծանր կացությունը և պայքարի տրամադրում նոր տերունիներին: Քնարական այս երգի վրա նկատվում է Ստ. Օրբելյանի «Ողբ ի դիմաց կաթողիկէի» կրոնա-քաղաքական պոեմի ազդեցությունը:

Զուղրալի երկիրս հայոց,
Ո՛ւր եմ նախկին հաւրն ամենայն,
Գեղաշուր և ջուկափառ
Պայազատ ուղիք յարեքես...:

Ուր պատերազմին վասն մեր,
Ազատեն զգերեալքս ամենայն,

Փրկելով զազգս և զազինս,
 Եւ համայն զաշխարհ՝ Հայաստան⁷:

Ուշագրավ են նաև Արևելյան Հայաստանում 1749 թ. պարսիկ տիրակալների կատարած ավերումների առթիվ Սիմեոն Երևանցու դրած ողբը, էջմիածնին նվիրված երգերը, ինչպես նաև «Արի աստուած հարցրն մերոց» սկսվածքով տաղը:

Թուրքական բռնակալության դեմ են ուղղված Գրիգոր Թշականցու 1795 թ. Արևմտյան Հայաստանում կատարած շրջագայության ժամանակ Անիի ավերակները այցելելիս դրած հայ-բենասիրական ողբը, Հովհ. Կարենցու 1777—1787 թթ. հորինած վիպական երկերը և այլն:

Սակայն, ինչպես արդեն նկատեցինք, հայրենասիրական քնարական երգի տաղանդավոր ներկայացուցիչը XVIII դարում Պ. Ղափանցին է: Նրա մեծաքանակ կրոնական երգերի մի զղալի մասի խոր շերտերում նույնպես թաքնված է օտարներից նվաճված հայ ժողովրդի վշտի դառն զգացողությունը:

«Աղաղակ խորհրդարար առ բարձևալն աստուած Կ խաչին՝ վասն փրկութեան մարդայն-նոս ազգին», «Դարձեալ ի նոյն միտ», «Լաց և խնդիր առ տէր, թերևս գտանէ զկորուսեալ առաքինութիւն մեր», «Բողոք դանձէ և կրտակ անըստակ», «Հպատրանաց աշխարհին» և այլ երգերում Պ. Ղափանցին երկնային թագավորի առջև բացում է իր ցաված սիրտը, մեկիկ-մեկիկ պատմում է իր դարդերը և օգնություն աղերսում: Հավատացյալ երգչի հախուռն տրտունջն ու բողոքը ուղղված է ժամանակի դեմ: Կյանքի հարվածները ցնցել են նրան. ուստի հուսահատ բանաստեղծը «վարդ» խորհրդանշով դիմում է աստծուն, ներկայացնելով նրան այն ներքին խոր ողբերգությունը, որ ապրում է ինքը հայ ժողովրդի և հայ եկեղեցու քաղաքական ծանր կացության պատճառով:

Ի նանապարհ յուր դրնայի. վա՛րդ, վա՛րդ,
 Ինձ որոգայք սարեալ լարի, վա՛րդ, վա՛րդ,
 Ըսեմ ի՛նչ է ցո՛յց իմս աննարի, վա՛րդ, վա՛րդ,
 Յայսմ անբարի մեծի դարի, վա՛րդ, վա՛րդ⁸:

Հուսահատական այս տրամադրությունը, որ կրոնական շաղախ ունի, ինչ որ չափով արտահայտում է Պ. Ղափանցու նաև քաղաքական մտորումները: Հավատացյալ երգչին մտա-տանջում է հայրենի երկիրն ու եկեղեցին մահմեդականության ստրկացնող լծից ազատելու խնդիրը. ուստի մերթ թախանձում, մերթ էլ զայրադին բողոքի շնչով պահանջում է աստծուց օգնել իր ժողովրդին պայքարի դուրս գալու թշնամու դեմ:

Ձիս աներմանս և նրմանիս մարգանման արա՛, տէր իմ,
 Յաշխարհի աստ զանրնտունիս՝ բոլո՞ւ ազգական արա՛, տէր իմ,
 Թըշնամեաց բոց շար հոմանիս, ի բոլո՞ւ կապան արկ գիս. տէր իմ,
 Զօրաց նոցունց մոլեկանաց՝ գիս փառաւօն արա՛, տէր իմ,
 Ձիս առ նոցունց արշաւանին օտարական արա՛, տէր իմ,
 Յրուեալ, վանեալ միշտ բզնոսայ յաղյոռո՞ւ մարտին արա՛, տէր իմ,
 Բիւր ֆանֆարաց պարտապանիս՝ զիր ազատման տո՛ւր ինձ. տէր իմ,
 Ինձ, անխոհեմ շինականիս ֆաղաֆական բարբ տուր, տէր իմ⁹:

Անձնածեծ, հուսահատական տրամադրությունների տակ թաքնված առողջ մտայնության կայծը Պ. Ղափանցու մոտ աստիճանաբար դառնում է աշխարհայացքային գիծ և զարգանում. կուսակրոն երգչին հայրենասեր բանաստեղծը քայլ առ քայլ մղում է առաջ՝ դեպի մտքի ազա-տություն:

Հայ բանասիրության պատմության մեջ Պ. Ղափանցու երգերի այս գիծը նկատելի է միայն Բենդիկը, «Ամենուր տարեցույցի» 1915 թ. հատորում տպագրելով Պ. Ղափանցու «Լեռ ազգն իմ պատուելի, խորհրդարար նշանակութեամբ վարդի» խորագրով բանաստեղծությունը, նա գրում է. «Ավելի ու պատշաճ ու վայելուչ ի՛նչ գրվածք կրնայինք գործածել իրր ներածություն Տարե-

⁷ Ղ ա դ ա ր ձ ա հ կ ե ց ի, Գիրք Նորարոյս, որ կոչի Երզարան, Պոլիս, 1737, էջ 238—240:

⁸ Երզարան, էջ 29:

⁹ Նույն տեղում, էջ 163:

ցույցիս Հայ կյանքի բաժնին համար, քան այս գեղունը—չքնաղ և հանդաճոխ՝ զոր ասկե շուրջ մեկ ու կես զար առաջ էջմիածնի միարան մը՝ Ղափանցի Պետրոս վարդապետ շարադրած է՝ այնքան անուշ և հոգեցունց։ Ալեոր վանականը, փոխանակ ուրիշներու պես տիրամայրն ու երկինքը փառաբանելու, երիտասարդական եռանդի մը եռենփր զգալով իր մեջ, գուրգուրագին երգեր է ահա իր ազգը պատվական, ծաղիկներու դշխոյին նմանցունելով զայն և պարզելով՝ անոր գեղեցկության տխուր ճակատադրականությունը. հետո, նոր հույսերով տոգորուն՝ բաղ-ձացեր է, որ «Վարդենին», հայ ազգը նորատունկ բողբոջի, ինքն ալ անոր տեսքովն վերստանա զարնանային գեղ ու հրապույր»¹⁰։

Պ. Ղափանցու նույնօրինակ երգերը կազմում են մի ընդարձակ շարք.—«Առ ազդն իւր սիրելի խորհրդարար նշանակութեամբ վարդի», «Դարձեալ առ ազդն իւր սիրելի», «Վշտակութենէ հայրենեաց մերոց ի դէմս զանազանից նմանութեանց», «Զգարնանէ բիւղանդիոյ որ խորհրդարար ականարկի առ բնակիչս նորին», «Առ ազդն իմ պատուելի», «Դարձեալ զԿոստանդնուպոլսոյ ի դէմս վարդի և պիւլպիւլի, որում զանազան նմանութիւն մակացութեանց ստորագրին՝ ներրողարար», «Սուգ լուսանահաւուն...», «Զգացումն զվարդէ», «Ողբ պիւլպիւլին...» և այլն։ Դրանք իրենց բովանդակութեամբ և արվեստով աչքի ընկնող նմուշներ են XIII—XVIII դարերի հայ բանաստեղծության մեջ։

Ամենից առաջ այս երգերը ազատասիրության ներբողներ են, սրտառուչ գովք և փառաբանություն հայրենիքի։ Քնարական հուզաթաթախ զեղումներով Պ. Ղափանցին մարմնավորում է հայ ժողովրդի ազատասիրական տենչանքները, պարսկա-թուրքական Եւրոպական լծից Հայաստանը ազատելու վեհ ու ազնիվ ձգտումը։ Պ. Ղափանցին հայրենիքը երգում է մեծ կրթով ու ավյունքով, ամբողջ սրտով, այնպես, ինչպես աշխարհիկ կյանք, սեր, բնություն են երգել Կոստանդին Երզնկացին և Հովհաննես Թլկուրանցին, այնպես, ինչպես այրված ու կրակված էիրով իրենց սիրուհուն, գյոզալին, յարին են երգել Նաղաշ Հովնաթանն ու Սայաթ-Նովան։

Լեզուս րննար, սիրտըս չրնար՝
 Դու ծովային անդիւրագիւտ մարգարիտ...
 Դանձ ես սրտիս ի կոկոնի քազուցեալ...
 Դու քազաւոր, ես քո ծառայն և հեզ գերի...
 Երգով րոյով զեղազարդեալ ճարտ իմ.
 Նոր-նոր սիրով բոցակիզեալ կարօտ իմ...¹¹

Այսպես, հազար ու մի եղանակով ներբողում է երգիչը իր ազգը՝ այսինքն հայ ժողովրդին.. իր հայրենիքը։ Բանաստեղծը հայրենիքին է նվիրում իր ողջ կյանքը, իր լացն ու ուրախութիւնը, իր սերը, իր քնարն ամբողջովին։

Լուսափայլուն, մարգարտատիպ սուրբ շաղերս,
 Լաց գիշերոյս և լաց աւուրս քեզ աղերս,
 Ընդ այնց րնկալ հաճոյապէս և տաղերս...:

Ջերգըս սրգոյ, սիրտըս լեզուիս կարկառէ,
 Ռեւանըս ուսեալ, զօր ամենայն բարբառէ,
 Սլերդ րզհոգիս իբրու հրեով վառվառէ...¹²։

Մերթ իր սրտի խոսքը բացահայտորեն ուղղելով հեռու հայրենիքին, հայ ժողովրդին, մերթ՝ Կոստանդնուպոլսին, մերթ էլ՝ ծաղիկներին ու թռչուններին. վարդին, մանուշակին, կաթավին, ծիծառին, արտուտին, տատրակին, նա նույն սերը, նույն հույզը, նույն զգացմունքն է բացահայտում, նույն շնչով հայրենիքը երգում։

Յոգութ յպահել րզքեզ կամիմ դարէ ի դար.
 Եթէ իցէր րդձիցս իմոց ճար և հրնար.
 Ձայս աղերսեմ և պաղատիմ միշտ անդադար,
 Յոյժ իղնաբար, յար ի վրտար, յերկիր օտար...¹³։

¹⁰ Թ Ե Ռ Գ Ի Կ, Ամենուն տարեցույց, Պոլիս, 1915, էջ 10։

¹¹ Երգարան, էջ 44, 50, 44, 89, 46։

¹² Նույն տեղում, էջ 54, 46։

¹³ Նույն տեղում, էջ 87։

Օտարության մեջ բանաստեղծը կանգնած է իր հայրենիքի դեմ բարձրացող խիստ հողմերի սողն, մարտնչում է վրիժառության ու հավատով լցված։

Անձն իմ զեւ Բո ի խիստ հողմոց, սստ զբւաւի,
Մոլի մոլխանացն առ զօրացեալ, ո՛չ զբւաւի,
Նեղի, տապի և տապտապի յանիւրաւի,
Ցաւօք ցաւի. զերք ի ծովի, յոյժ անբաւի¹⁴։

Նուրբ զգացողությամբ Պ. Ղափանցին պեղում է հայրենասեր մարդու ներքնաշխարհը։ Նա անդրադառնում է հայության քաղաքական կյանքի խճողված հարցերին, ապրում է սեփական պետականությունը կորցրած իր ժողովրդի մեծ վիշտը, խոսում է օտար բռնակալների լծի տակ ընկած իր հայրենակիցների սրտից. վերապրում նրանց հին ու նոր ցավերը¹⁵։

Ներհուն, անձնական-քնարական այս երգերի ոգին հայության համընդհանուր վիշտն է, աղ-
ղային վիշտը, որ հերքին հոսանքով երբեմն անցնում է նաև երգչի կրոնական որոշ տաղերի մի-
ջով։ Սակայն հայրենիքի և բնության վերահիշյալ երգերում զարմանալիորեն բացակայում են
ապաշխարողի մեղքի և զղջման մրմունջները։

Այս երգերում հայրենիքը դառնում է բանաստեղծի կենսազգացողության, շիտակ հոգերն-
կայումների շարժիչ լծակը։ Նրանցում լսվում են սեր, կարոտ, դովք, անրջանք, տանջանք, ողբ,
յաց, թախիծ, վիշտ, հուսահատություն, մահ, ապա հույս, ցնծություն, խրախճանք, փառաբա-
սություն, պայքար։ Սա հայ անձնական քնարերգության մեջ նոր դիժ է, բանաստեղծի և ժամանա-
կակից իրականության միջև որակական նոր հարաբերության արտահայտություն։

Ո՛վ իմ ազնիւ, բզկենցաղոյս քէ հաւցանես,
Խելագարեսու շրջագայիմ՝ տաւիճ բոլոր.
Թէ բզէ՛մաղ բզղէ՛մքս Բո ինձ ցուցանես,
Ի միտս եկեալ՝ բզգաստանամ տաւիճ բոլոր¹⁶։

Այսպես է սկսում Պ. Ղափանցին իր հեռակա դրույցը հայրենիքի հետ «Դարձեալ առ ազգն
Էւր սիրելի» երգում։

Յորժամ բանիս, շաղով քանիս, ես լրբջանամ,
Ուրպէս Լի, դարձեալ այնպէս, իսկ նոյնանամ,
Երև յամիս, բանիլ չկամիս, ոչ ողջանամ.
Այլ ի մանիճս անկեալ դրնիմ՝ տաւիճ բոլոր¹⁷։

Բանաստեղծը տենդորեն հետևում է հայրենիքի քաղաքական ընթացքին։ Երգչին տիրում է
ինքնամոռացումը՝ երբ լուր չունի հայրենիքից, վերածնվում է բանաստեղծը՝ երբ աշխուժանում
է հայոց ազգային կյանքը, մարում, հանդում է նա՝ երբ դանդաղում է հայրենիքը։

Հայ ներբողական քնարերգության մեջ եզակի արժեք ունի Պ. Ղափանցու «Բացի՛ր բացի՛ր
իմ կարմիր վարդ» կրկնակով երգիւ, ուր վարդը մերթ քանաստեղծի հայրենիքն է. մերթ՝ Կոս-
տանդնուպոլիսը, Շուրջ 400 տողանոց քնարական ներբողում, ուր չկա կրոնական ոչ մի երանգ,
թանձրանում է հայոց վիշտը։ Այստեղ էլ բանաստեղծը սղում է հայկական պետականության ոչըն-
չացման հետևանքով ստեղծված հայ ժողովրդի ծանր կացությունը։ Փորձությունները, դժվարու-
թյունները շատ են, ցավերը ամեն կողմից «բարդ-բարդ», «դաս-դաս», և բանաստեղծը հաճախ
հուսահատվում է՝

Ձիս բրժոշկելի, ո՛չ ոք կաւի, եմ աննաւ...։

Նրան պատում է հայրենիքի տխուր ճակատագրի սարսափը, նրա վիճակի անորոշությունը¹⁸։
Ոչ ոք, ոչի՛նչ չի կարող սփռփել բանաստեղծին. դանձ, փաւք, պատիվ, որոնց հետամուտ են շա-
տերը, անարժեք են նրա համար, նրան հետաքրքրում է միայն ազգի շահը։

14 Նույն տեղում, էջ 87։
15 Տե՛ս նույն տեղում, էջ 86, 87։
16 Նույն տեղում, էջ 88։
17 Նույն տեղում, էջ 88։
18 Տե՛ս նույն տեղում, էջ 47, 43։

Ոմանք ոսկւոյ, ոմանք պատուոյ անդադար,
Ըզոէրս իւրեանց տան նոցա յոր ըղձան հար՝
Իսկ ես՝ միայն բում բերքիցդ եմ պիտանար...19:

Մեր բանաստեղծի այս երգերը խաղաղ նկարագրական բնույթ չունեն։ Ազդային ներքին խախտը, զգացմունքների զուսպ պայքարը, ինչպես տեսանք, հաճախ տեղի են տալիս պոռթկումների, ողբի ծնում է արիություն։ «Առ ազգն իմ պատուելի խորհրդարար նշանակութեամբ վարդի» երգում նույնպես նա հայ ժողովրդին կոչ է անում արթնանալ քնից, ոտքի ելնել, նախապատրաստվել պայքարի, բանակ, զորագունդ կազմել, պատվար դարձնել լեռներն ու սարերը, օթևանել այնտեղ մինչև հասնի իսկական ժամը. ապա բանաստեղծը հորդորում է ճանաչել սեփական ուժերը, շտապել, գործել զգույշ, հստակ և մտածված, լինել տոկուն ու շրջահայաց՝

Հոգւոյ իմոյ զանձ անըստառ և բիւր բարի.—

դիմում է նա իր ազգին՝

Ձաբի՛ր փութով, ունկըն մտո՛ւ, ի լո՛ւր արի,
Տե՛ս քէ դիա՛րդ ցուրտն յերեսացդ ի բաց վարի,
Ձէտ անճարի, միշտ շաւշարի, ի դար դարի...20:

Քէզ Կարմելոս և Լիրանան այլև Սասիւր,
Սահման կալեալ, բանակ արկեալ՝ օրեանիւր,
Լիւնչև անցցէ ձիւն ու ձրմեռն այդրէն խնամիւր՝
Ըղբեղ ծանի՛ր, լուսոյ նմանի՛ր, փոյր մի՛ բանիւր21,

Պարսկա-թուրքական բռնակալները չանում էին ոչնչացնել հայ ժողովրդին, աշխարհով մեկ շարժել նրա թերթիկները. «Արդ, լե՛ր տեղեակ, ես քեզ գուշակ, հսարեա՛ ճարակ»՝ զեղում է բանաստեղծը իր կանխազգացումները. իսկ միակ ճարը սթափումն էր, արիությամբ գործելը՝ ազդային ինքնաճանաչումը. «Ըղբեղ ծանի՛ր, լուսոյ նմանի՛ր, փոյթ մի բանի՛ր», քանի որ ստեղծել է նաև օղտակար ժամը՝ «Տապ և խորշակ եղեն արդէն մահամօտ», «Փըշոտ անտառք ի դիմաց քոյ կորացան», «Որդն և ուտիչ պակասեցան տեսակաւ» — քաջալերում է երգիչը նաև Կոստանդնուպոլսին նվիրված վերոհիշյալ ներբողումը։

Նույն անմիջական ազատասիրական տրամադրություններն է Ղափանցին արտահայտում նաև Կոստանդնուպոլսի նկատմամբ։ «Ըզգայնանէ Բիւզանդիոյ, որ խորհրդարար ակնարկի առ լինակիչս նորին» քնարական տաղը և «Դարձեալ զԿոստանդնուպօլսոյ ի դէմս վարդի և պիւպիւլին, յորում զանազան նմանութիւնք մակացութեանց ստորագրին ներբողարար» ներբողը հավասարապես վերաբերում են հայ և հույն ժողովուրդներին։

Հայտնի է, որ դեռ հնուց մահմեդականների լծից հայության ազատագրման հարցը կապվում էր հույների հետ։ Միջնադարյան հայ երգիչների՝ Պոլսի անկման շուրջ հյուսված ողբերի և բանաստեղծությունների հիմքում ընկած է այդ զաղափարը։ Առաքել Բաղիշեցին իր «Ողբ մայրաքաղաքին Ստրմպուլու», Արրահամ Անկյուրացին «Ողբ ի վերայ առման Կոստանդնուպօլսոյ», Երեմիա Քյոմուրճյանը և այլոք, իրենց համանման երգերում ողբալով Պոլսի անկումը և տենչալով նրա ազատությունը, տենչում էին նաև իրենց հայրենիքի ազատությունը օտար տերերի լծից։ Պ. Ղափանցու հայացքները սնվում են այդ նույն հողից՝ նոր ժամանակների նոր պահանջներին զուգակցված։ Նրա վերոհիշյալ երգերը հայ և հույն ժողովուրդների ազատագրական պայքարի քնարական առաջին արձագանքներն են XVIII դարում։ Հայտնի է նաև, որ այդ ժամանակ հայության ազատագրության հարցը իր շուրջը խմբավորել էր զաղափարական տարրեր հայացքների տեր քաղաքական ու կրոնական գործիչների։ XVIII դարում հույների ազատագրության խնդիրը նույնպես կապվում էր Ռուսաստանի հետ։ 1760—1770-ական թթ. Բալկանյան-

19 Նույն տեղում, էջ 46։

20 Նույն տեղում, էջ 87։

21 Նույն տեղում։ Կարմելոս, Հիբանան և Սահիր լեռները խորհրդանշում են քրիստոնյա ապստամբ ժողովուրդների պայքարը, Պ. Ղափանցին այդ անունները հիշատակում է փոխաբերական իմաստով։

րում և Թուրքիայի ներսում ուժեղացած քաղաքական խլրտումների մեջ մեծ դեր էին խաղում հայերը և հույները, որոնք իրենց թիկունքում տեսնում էին նաև սուլթանական Թուրքիայի ամենաուժեղ թշնամուն՝ Ռուսաստանը։ Պ. Ղափանցին ահա այդ նույն ժամանակաշրջանում իր երգերով արձագանքում է հայ և հույն ժողովուրդների ազատագրական պայքարին։ Պ. Ղափանցին տեսնում է Պոլսի գարունը, ազատագրությունը, նրա քաղաքական վիճակը համադրում է հայ ժողովրդի վիճակին և մարմնավորում է երկու ժողովուրդների ազատագրական ձգտումները։

Պ. Ղափանցին ստեղծել է ոչ թե վարդի ու սոխակի հոգեշահ սիրո երգեր, այլ քաղաքական-քնարական, ժողովրդա-ազատագրական տրամադրություններով հագեցած երգերի ինքնատիպ շարք, հայրենիքի և բնության երգեր։ Այդ նրա քնարի բացառիկ արժանիքն է։ Պ. Ղափանցու քնարական այս երգերի հերոսը հուզաթուփախ, ազատախոհ մարդն է, որին կերպարանավորել է բանաստեղծը մեծ մասամբ իր անձի, իր եսի, իր բանաստեղծական մեծ անհատականության միջոցով։ Սա Պ. Ղափանցու արվեստի երկրորդ բնորոշ առանձնահատկությունն է։

Միջնադարյան հայ քնարերգության մեջ՝ X—XVIII դարերում, Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա բնությունը հանդես է եկել որպես հավատքի, կրոնական գաղափարների դրսևորման միջոց-խորհրդանիշ, որպես մարդու աշխարհիկ բազմատեսակ զգացմունքների՝ սիրո, ուրախության, հրճվանքի թարգման, բնությունը ներկայացվել է նաև իրական վիճակով, առանց տարապայման դերի. ոչ իբրև խորհրդանիշ։ Պ. Ղափանցու մոտ, սակայն, բնությունը հանդես է գալիս նաև մի այլ, բոլորովին նոր դերով. այն դառնում է մարդու ազատասիրական զգացմունքների խորհրդանիշը։ Բնության նկատմամբ նման վերաբերմունքի առանձին արտահայտություններ կան հայկական միջնադարյան ժողովրդական երգերում, պատմական որոշ ողբերում, սակայն Պ. Ղափանցին հանդես է բերում բնության նկատմամբ բանաստեղծական յուրօրինակ և նոր հայացք։

Պ. Ղափանցու գրչի տակ բնությունը վեր է ածվում մանրանկարչական գունագեղ պատկեր-համեմատությունների, պատկեր-գաղափարների։ Այդ Պ. Ղափանցու քննության առարկա երգերի արվեստի երրորդ կարևոր առանձնահատկությունն է։

Ամպերն ելեալ յովկեանոս մեծի ծովէն,
Ուղղեալ առ Բեզ. զաւն ի ցօղել՝ ի սուրբ հովէն,
Խինչ դու փրքքիս յամլնանոյշ գաւնան զովէն,
Ի վերայ Բո հոգով խայտամ՝ տաւին բոլոր²²

Կրում է բանաստեղծը իր հայրենիքին «Առ ազգն իւր սիրելի» տաղում։

Անո՛յշ, անո՛յշ պաղուկ ջրերն աղբերաց,
Թեօք բարձեալ բերեմ առ Բեզ ի լեւանց,
Ցանեմ, ցօղեմ Բոյդ քփերուդ Եզերաց...²³

Ուղղում է նա իր խոսքը «վարդ» հայրենիքին՝ Կոստանդնուպոլսին նվիրված տաղում։

«Դ՛ք բնությունը, առավել ևս վարդն ու սոխակը, մարմնավորում են հայրենիքի սերը, շարժվում, գործում են նրա շնչով, ի սպաս են դրվում նրան՝

Ընդ տեռ Բոյին ուրախանան ամլն բոշունքն օղային,
Եւ նախ առեալ ի վեր. ի վայր հանդիսապէս գումարին,
Քն բուրաստան և անղաստան գեղեցկացեալ գաւդաւին...²⁴

Բացատրում է նա իր «վարդ» հայրենիքին։

Ա՛րդ, բարձրացո՛ զծայն Բո րստ իս,
Եւ փառատեա՛ր զսուղ սոտիս,
Հայցմամբ Բոյոյ Երգարանիս²⁵։

Մախանձում է բանաստեղծը կաթավին «Փութա առ մեղ նաղշուն կաթաւ» հանրահայտ երգում։

²² Երգարան, էջ 89։

²³ Նույն տեղում, էջ 48։

²⁴ Նույն տեղում, էջ 19։

²⁵ Նույն տեղում, էջ 56։

Բզբրոչունս երկնից արդ, կոչեցէ՛մ արագ,
 Սուգ առցեն ի վերայ իմ լալով յարակ,
 Իմ հոգւոյս ցավերուն ո՛չ գրտի նարակ,
 Ահա՛, նրադիմ ե շրնշաֆադիմ,
 Անկեալ հոգէվար ի յերկի՞թ թադիմ²⁶

աղերսում է կարոտակեզ ըլթուլ-բանաստեղծը երկնային թռչուններին՝ «վարդա-հայրենիքից մի լուր ստանալու համար: Իսկ «Ջվլտակուրենէ հայրենեաց մերոց ի դէմս զանաղանից նմանութեանց» բանաստեղծության մեջ հայոց վիշտը փոխանցվում է բնությանը, բնությունը իմաստավորում է հայության բնավերությունը, դադթի ողբերգական իրականությունը: Թանձրախիտ ծառերի և տունկերի միջից լսվում են ողբի ու հառաչանքի ձայներ, տխուր գեղգեղանք, կործանվել, բանդվել են պարտիզաց պարիսպները, ցամաքել են ամպերը, փակվել է դարնան մուտքը, սև սոխակները ողբաձայն դուռում են, անօթևան թռչունները երամ-երամ լալիս են, ձյունապատ լեռներն ու ձորերը, դաշտերն ու մարդագետիները իրենց ցուրտ դիրկն են բացում «ցիրուցան համայնքի» համար:

Երբեմն, սակայն, բնությունն էլ անզոր է դառնում բուժելու հայրենակարոտ երգչի հոգու խորունկ վերքերը՝

Բզբոց սորտիս ովկեանոսն ո՛չ մարէ,
 Տալ զովութիւն տալոյ սրտիս ո՛չ կարէ,
 Յուրաֆանշիւր ժամ զիշերոյս՝ ինձ դար է...²⁷,

Պ. Ղափանցու երգերում ուժեղ զգացմունքայնությունը, պատկերների դուռագեղությունն ու ճոխությունը զուգակցվում են բառապաշարի հարստության, բազմազան բառաձևերի, բառաբարդությունների, երգչի դեղադիտական բարձր ճաշակի, նկարագրական, դիտողական մեծ ձիրքի և մանավանդ բանաստեղծության կառուցվածքի, տողերի անդամահատման, նրանց ներքին հանդավորման տաղաչափական վարպետությանը:

Միլ-ծիլ ոսկի է վարդի բերքերոն,
 Ուրպէս և ասեն նախնի ծերերոն,
 Ահա մերձեցաւ գարնան ջրերոն, անոյշ օրերոն,
 Գեղգեղեալ գոչէ կանչէ, հառաչէ պիւպիւրն՝
 Երամով իւրով
 Չալ-չալ բերքն ի սէր տարածեալ,
 Ողբով և սգով շեղե շատացեալ
 Ի վերայ վարդին կարօտահաւեալ և սիրով վառեալ...:

Մալ-ծալ բերքերու վարդին բերաբաց,
 Հեղու գարտասուս նրման աղբերաց,
 Նրնջել և հանգչիլ նա րստ օրինաց՝ երբէք ո՛չ գիտաց...

Ձիլ-գիլ ձայներով, համէղ տաղերով,
 Գինին սառացէք փայլուն պաղերով,
 Վարդըն փրնջեցէք բօփ-բօփ շաղբերով՝ պաւտ-պուտ ցօղերով²⁸:

Այնքան պարզ ու կենդանի է մատուցվում այս բոլորը, որ թվում է թե շոշափում ես վարդի ծիլ-ծիլ ոսկի թերթերը, սոխակի չալ-չալ, ծալ-ծալ թևերը, կամ տեսնում ես նրան քոլ-քոլ վարդենյաց շուրջը ծույլ-ծույլ ոստոստելիս կամ տաք-տաք արցունքներ թափելիս:

* *

Հայ նոր բանաստեղծության ծիւծիւրը, որ շոշափվում են դեռևս XVII դարի վերջերի քնարերգության մեջ, XVIII դարում շարունակում են աճել որոշակիորեն զծագրվող գրական երկու դուրահեռ ուղիներով. առաջինը աշուղական-ժողովրդական բանաստեղծության լայն ճանապարհն է,

26 Նույն տեղում, էջ 38:

27 Նույն տեղում, էջ 53:

28 Նույն տեղում, էջ 22:

որի գազաթում կանգնած է հանճարեղ Սայաթ-Նովան, իսկ երկրորդը՝ հայ դասական բանաստեղծության ճանապարհը, որի վրա կանգնում են երկու նշանավոր բանաստեղծներ՝ Պաղտատար Դպիրը և Պետրոս Ղափանցին, սրանց շուրջը համախմբվում են բազմաթիվ այլ երգիչներ՝ Հովհաննեսի, Գրիգոր Օշականցի, Հակոբ պատրիարք, Սիմեոն Նրևանցի, Գևորգ Խուրով և այլք։ Գաղտատար Դպրի և Պ. Ղափանցու քնարը կիսով չափ կապվում է միջնադարի հետ։ Սակայն նրանք իրենց արվեստով բերում են նորարարական այնպիսի գծեր (գրական միասնական լեզու, բանաստեղծության հորինվածքի, տաղափության նոր եղանակներ ու ձևեր, բանաստեղծական նոր կերպարներ, անհատական զգացմունքների, խոհականության նոր շեշտ, անձնական հասարակական, սոցիալական, ժողովրդա-ազատագրական տրամադրություններ և այլն), որոնք ոով Սայաթ-Նովայի մեծ արվեստի հետ միասին ստեղծում են հաստատուն հիմք՝ XIX դարի հաջորդ գրականության զարգացման համար։

Պ. Ղափանցուն պետք է գնահատել այս տեսանկյունով։